

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԷՋՄԻԱԾԻՆԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ
ԱՄԲԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔ



РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
АРМАВИРСКИ МАРЗ
ЭЧМИАДЗИНСКИ РЕГИОН
СЕЛЬСКАЯ ОБЩИНА АМБЕРД

N 01-10
«29» ՀՈՒՆՎԱՐ 2020թ.

ՀԵՌ.(093) 32-59-62
ՏԵԼ.(093) 32-59-62

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻՊԵՏ,
ՊԱՐՈՆ՝ Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻՆ

ՀԱՐԳԱՐԺԱՆ ՄԱՐԶՊԵՏ, ՊԱՐՈՆ՝ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ

Կից ներկայացնում ենք Ձեզ Արմավիրի մարզի Ամբերդ համայնքի 2020 թվականի հունվարի
29-ի ավագանու թիվ 1 նիստի որոշումները:

Առդիր 46 թերթ:

Համայնքի ղեկավար



Մ. Բաբայան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՄԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1-Ա

ԹԻՎ 1-Ա

<<29>> ՀՈՒՆՎԱՐԻ 2020 Թ.

ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետով.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ամբերդ համայնքի ավագանու 2020 թվականի հունվարի 29-ի թիվ 1 նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԿՈՂՄ

ԴԵՄ

ՁԵՌՆՊԱՀ

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝
Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ
Հ. ՍՏԵՓԱՆՅԱՆ
Վ. ԳԱՐՐԻԵԼՅԱՆ
Գ. ԹՈՐՈՍՅԱՆ
Վ. ԽՈՒՐՇՈՒԴՅԱՆ
Ն. ՍԱՐԳՍՅԱՆ

(Signatures of the members of the community council)

Համայնքապետ՝

(Signature of the community head)

Մ. Բաթայան

Վ.Տ.

2020 թվականի հունվարի 29

Գ. Ամբերդ



ՀԱՎԵԼՎԱԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՄԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 29-Ի
ԹԻՎ 1 ՆԻՍՏԻ N 1-Ա ՈՐՈՇՄԱՆ

ՕՐԱԿԱՐԳ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՄԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ

1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՄԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ ԹԻՎ 1 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏՈՒՄ
2. ՀԱՍՏԱՏԵԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՄԲԵՐԴ
ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԵՐԻ ԱՆՑԿԱՅՄԱՆ
ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒԹՅԸ
3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՄԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ ՀԱՍՏԱՏՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼ ԱՄԵՆԱՄՅԱ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ
ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ
4. 2020 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ
5. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ
6. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՍՈՒԲՎԵՆՅՈՒ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՅՏ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ
ՄԱՍԻՆ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝



Ս. ՍԱՐԳՍՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ
ՄԱՐԶԻ ԱՄԲԵՐՂ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 2-Ա

«29» ՀՈՒՆՎԱՐԻ 2020 Թ.

ԹԻՎ 2-Ա

ՀԱՍՏԱՏԵԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՄԲԵՐՂԻ
2020 ԹՎԱԿԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության
օրենքի 13-րդ հոդվածի երրորդ մասով,

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ամբերդ համայնքի
2020 թվականի ավագանու նիստերի անցկացման ժամանակացույցը՝ համաձայն
հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԿՈՂՄ

ԴԵՄ

ՁԵՐՆՊԱՀ

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝
Վ. ԽԱԶԱՏՐՅԱՆ
Հ. ՍՏԵՓԱՆՅԱՆ
Վ. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ
Գ. ԹՈՐՈՍՅԱՆ
Վ. ԽՈՒՐՇՈՒԴՅԱՆ
Ն. ՍԱՐԳՍՅԱՆ

(Handwritten signatures of the members of the community council)

Համայնքապետ՝

Կ.Տ.

Մ. Բաբայան

2020 թվականի հունվարի 29

Գ. Ամբերդ

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՄԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 29-Ի
ԹԻՎ 1 ՆԻՍՏԻ N 2-Ա ՈՐՈՇՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՄԲԵՐԴ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ
ՆԻՍՏԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

ԿԸ	Ամիսը	Օրը
1	Հունվար	29
2	Մարտ	30
3	Մայիս	29
4	Հուլիս	29
5	Սեպտեմբերի	29
6	Նոյեմբեր	30

Աշխատակազմի քարտուղար



Ա. Սարգսյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ
ՍԱՐԶԻ ԱՄԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 3-Ա

«29» ՀՈՒՆՎԱՐԻ 2020 թ.

ԹԻՎ 3-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՍԱՐԶԻ ԱՄԲԵՐԴ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԱՍՏԱՏՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼ ԱՄԵՆԱՄՅԱ
ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության
օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 32-րդ կետով.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ամբերդ համայնքի
2020 թվականի ամենամյա գույքագրման փաստաթղթերը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԿՈՂՄ

ԴԵՍ

ՁԵՌՆՊԱՀ

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

Վ. ԽԱԶԱՏՐՅԱՆ

Հ. ՍՏԵՓԱՆՅԱՆ

Վ. ԳԱՐՐԻԵԼՅԱՆ

Գ. ԹՈՐՈՍՅԱՆ

Վ. ԽՈՒՐՇՈՒԴՅԱՆ

Ն. ՍԱՐԳՍՅԱՆ

Համայնքապետ՝

Մ. Բարայան

Կ.Տ.

2020 թվականի հունվարի 29

Գ. Ամբերդ

ՀԱՎԵԼՎԱԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՄԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 29-Ի
ԹԻՎ 1 ՆԻՍՏԻՆ 3-Ա.ԴՐՈՇՄԱՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՄԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ ՀԱՍՏԱՏՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼ ԱՄԵՆԱՄՅԱ
ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Համայնքապետարան

1. Ակումբի շենք
2. Ջոկվածների հուշարձան
3. Ակումբի ասֆալտ
4. Գերեզմանի փողոցի ասֆալտ
5. Հուշարձանի ցանկապատ
6. Բաղնիքի շենք
7. Երկաթյա պահարան 5 հատ
8. Գերեզմանիի ցանկապատ
9. Արցախյան պատերազմի զոհվածների խաչքար
10. Բազկաթոռ
11. Համակարգիչ R41M/3DDR256
12. Monitor Orange 7751h
13. Printer LBP 1120 LP
14. Պատճենահանման սարք
15. Հեռուստացույց LG
16. Միկրոֆոնի տակդիր
17. Գրասեղան 5 հատ
18. Համակարգչային սեղան 1 հատ
19. Գրասեղան 1 հատ

20. Համակարգիչ Core i3-540
21. Տպիչ Canon MF 4410
22. Հանդերձապահարան 1 հատ
23. Հեռուստացույցի սեղան 1 հատ
24. Ժուռնալի սեղան 1 հատ
25. Պրապահարան 2 հատ
26. Խորհրդի սեղան 1 հատ
27. Օֆիսային աթոռ /4/6/ 1 հատ
28. Օֆիսային աթոռ /380/ 8 հատ
29. Սպորտ հրապարակի սետկա
30. Դրոշ և տակդիր
31. Զինանշան
32. Նախագահի նկար
33. Ցուցանակ
34. Գազի խողովակ
35. Համակարգիչ intel core i3
36. Տպիչ Canon MF 4410
37. Ռոութեր TP-link TL-WR470
38. Դյուրակիր համակարգիչ
39. Համակարգիչ Ինտել G2030
40. Խոհանոցային կահույք
41. Սեղան 21
42. Աթոռ 100 հատ
43. Վարելահող 11 հա
44. Էլեկտրական շչակ
45. Կառավարման վահանակ Պ-164 Ա
46. Դեկորատիվ ծառեր 321 հատ՝ որից
ա/ հացենի 125 հատ
բ/ թեղի 13 հատ
գ/ թղկի 17 հատ
դ/ թթենի 15 հատ

ե/ բարդի 17 հատ
զ/ ուռենի 101 հատ
է/ եղեվնի 33 հատ

Գրադարան

1. Երկաթյա գրադարան
2. Ցուցափեղկ 2 հատ
3. Ցուցափեղկ 3 հատ
4. Գրացուցակ արկղ
5. Գրասեղան 1 տեղանոց
6. Գրադարակներ 2 հատ
7. Սեղան դիմադիր 2 հատ
8. Տունքա 1 հատ
9. Սեղան 2 հատ մանկան
10. Աթոռ մանկական 8 հատ
11. Գրքեր 6889 հատ
12. Ալբոմ 1 հատ

Աշխատակազմի քարտուղար



Ս. Մարգարյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՄԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 4-Ա

«29» ՀՈՒՆՎԱՐԻ 2020Թ.

ԹԻՎ 4-Ա

2020 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 7-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ամբերդի համայնքապետարանի 2020 թվականի տարեկան աշխատանքային պլանը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԿՈՂՄ

ԴԵՄ

ՁԵՌՆՊԱՀ

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

Վ. ԽԱԶԱՏՐՅԱՆ

Հ. ՍՏԵՓԱՆՅԱՆ

Վ. ԳԱՐԻԵԼՅԱՆ

Գ. ԹՈՐՈՍՅԱՆ

Վ. ԽՈՒՐՇՈՒՂՅԱՆ

Ն. ՍԱՐԳՍՅԱՆ

Համայնքապետ՝

Մ. Բաբայան

Վ.Տ.

2020 թվականի հունվարի 29

Գ. Ամբերդ

ՀԱՅԵԼՎԱԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՊՐԱՆՎԱԾԱԿԱՆ ԲԱՆԿԱԿԵՆՏՐԱԿԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 / ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 29-Ի

ԴԻՆԳ 1 ԱՌԱՍՏԻ N 4-Ա ՈՐՈՇՄԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՄԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔ

ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ

ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ



Կազմել է՝ համայնքի ղեկավար ՄԱՆՎԵԼ ԲԱԲԱՅԱՆ

Հաստատվել է՝ համայնքի ավագանու 2020 թվականի հունվարի 29-ի թիվ 1
նիստի 4 -Ա որոշմամբ

ԱՄԲԵՐԴ 2020

Բովանդակություն

Ներածություն.....	3
1. ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՍԼԱԿԱՆԸ և ՈԼՈՐՏԱՅԻՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ.....	3
2. ՀԱՄԱՅՆՔԻ 2020 Թ. ԾՐԱԳՐԵՐԻ ՑԱՆԿԸ և ՏՐԱՄԱԲԱՆԱԿԱՆ ՀԵՆՔԵՐԸ (ԸՍՏ ՈԼՈՐՏՆԵՐԻ)	7
3. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ 2020Թ. ԾՐԱԳԻՐԸ	27
4. ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՊԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՊԼԱՆԸ	30
5. ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՊԻ ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ և ԳՆԱՀԱՏՄԱՆ ՊԼԱՆԸ	32

Ներածություն

Սույն տարեկան աշխատանքային պլանը (ՏԱՊ-ը) մշակվել է համայնքի հնգամյա զարգացման ծրագրով (ՀՀԶԾ-ով) սահմանված՝ համայնքի տեսլականի, ռազմավարության, ոլորտային նպատակների և ծրագրերի իրականացման նպատակով՝ ելնելով 2020թ. ֆինանսավորման կոնկրետ հնարավորություններից և անհետաձգելի կատարման ենթակա աշխատանքներից:

ՏԱՊ - ի մշակման մեթոդական հիմք է հանդիսացել «Համայնքների ֆինանսիստների միավորում» ՀԿ-ի փորձագետների կողմից 2018 թվականին պատրաստված «Համայնքի տարեկան աշխատանքային պլանի մշակման» մեթոդական ուղեցույցը:

ՏԱՊ -ում ի մի են բերվել համայնքի միջոցներից և տարբեր աղբյուրներից 2020թ. ֆինանսավորվող ծրագրերն ու միջոցառումները, որը հնարավորություն կտա ապահովել Ամբերդ համայնքի համամասնական զարգացումը, ուշադրության կենտրոնում պահելով շարունակական լուծում պահանջող և ՀՀԶԾ-ով առաջ բաշված հիմնախնդիրները:

ՏԱՊ -ի I-ին բաժնում ներկայացված են համայնքի տեսլականը և ոլորտային նպատակները, 2-րդ բաժնում բերված են համայնքի 2020թ. ծրագրերի ցանկը և նրանց տրամաբանական հենքերը, 3-րդ բաժնում՝ համայնքի գույքի կառավարման 2020թ. ծրագիրը, 4-րդ բաժնում՝ համայնքի ՏԱՊ-ի ֆինանսավորման պլանը, իսկ 5-րդ բաժնում՝ համայնքի ՏԱՊ-ի մոնիթորինգի և գնահատման պլանը:

1. Համայնքի տեսլականը և ոլորտային նպատակները

Համայնքի տեսլականը՝

Ամբերդ համայնքի բնակչությունը գյուղատնտեսությամբ զբաղված, բարեկարգ, մաքուր և լուսավոր համայնք է: Որակյալ կրթական ուսումնական հաստատությունով: Համայնքում զարգացած է բանջարաբուծությունը, այգեգործությունը և պտղաբուծությունը:

Ստորև ներկայացված են համայնքի կայուն զարգացման ցուցանիշները: Ցուցանիշի ելակետային արժեքը՝ համապատասխան ցուցանիշի 2019 թվականի նոյեմբերի 1 - ի դրությամբ ֆիքսված արժեքին 2019 թվականի նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին կանխատեսվող ցուցանիշի ավելացումն է, հաշվի առնելով համայնքում առկա՝ զարգացումները և միտումները, ինչպես նաև նախորդ տարիների փորձը: Ցուցանիշի թիրախային արժեքը՝ համապատասխան ցուցանիշի պլանավորվող արժեքն է, այսինքն՝ այն արժեքը, որին կհասնի համայնքը 2020 թվականին ՏԱՊ-ը հաջողությամբ իրականացնելու դեպքում:

ՏԱՊ-ում ոլորտների և ծրագրերի ազդեցության վերջնական արդյունքի որոշ որակական ցուցանիշների գնահատման համար կիրառվել է 10 բալանոց սանդղակ՝ 1- շատ վատ, 2 – վատ, 3

- բավականին վատ, 4 - ավելի շատ վատ, քան լավ, 5 - միջին՝ ոչ լավ, ոչ վատ, 6 - ավելի շատ լավ, քան վատ, 7 - բավականին լավ, 8 - լավ, 9 - շատ լավ, 10 - կատարյալ:

Աղյուսակ 1. Համայնքի կայուն զարգացման ցուցանիշները

Ցուցանիշ	Ելակետային արժեք	Թիրախային արժեք
Աղքատության շեմից ցածր գտնվող ընտանիքների թվի տեսակարար կշիռը համայնքի ընտանիքների ընդհանուր թվի մեջ (%)	12	10
Համայնքի բյուջեի սեփական եկամուտների տեսակարար կշիռը ընդհանուր եկամուտների մեջ (%)	31.2	31.2
Համայնքում հաշվառված բնակիչների ընդհանուր թիվը (մարդ)	1558	1580
Համայնքում գործող ՓՄՁ-ների քանակը և աշխատողների թիվը (մարդ)	5/5	7/7
Համայնքում տվյալ տարվա ընթացքում ներդրումների ծավալը (հազ. դրամ)	0	0

Ստորև սահմանված են համայնքի ոլորտային նպատակներ՝ ըստ համայնքի ղեկավարի լիազորությունների առանձին բնագավառների (ոլորտների):

Աղյուսակ 2. Համայնքի ոլորտային նպատակները

Ոլորտային նպատակ	Վերջնական արդյունքի՝		
	Ցուցանիշ	Ելակետային արժեք	Թիրախային արժեք
Նորոգ. Ընդհանուր			
Կարելավել ՏԻՄ-երի, ամայնքապետարանի աշխատակազմի և ՀՈԱԿ-ների ողմից համայնքի բնակչությանը ատուցվող հանրային առաջությունների որակը:	Համայնքի բնակիչների քավարարվածությունը ՏԻՄ-երի աշխատակազմի և ՀՈԱԿ-ների կողմից մատուցված ծառայությունների որակից (սոց. հարցումներ)	ավելի շատ լավ, քան վատ	բավականին լավ
	Համայնքի բյուջեի սեփական եկամուտների տեսակարար կշիռը բյուջեի ընդհանուր մուտքերի կազմում (%)	31.2	31.2
Նորոգ. Պաշտպանության կազմակերպում			
ՕԶՕ թվականի ընթացքում լորտում ծրագրեր և իջոցառումներ չեն ախատեսվում, այդ պատճառով լորտային նպատակ չի	-	-	-

ախմանվել:			
ԼՈՐՐԿ 3. Արտակարգ իրավիճակներից շնակության պաշտպանություն և լադաքացիական պաշտպանություն			
020 թվականի ընթացքում լորտում ծրագրեր և իջոցառումներ չեն ախատեսվում, այդ պատճառով լորտային նպատակ չի ախմանվել:	-	-	-
ԼՈՐՐԿ 4. Քաղաքաշինություն և լումունալ տնտեսություն			
Իրականացնել բնակավայրային լումունալ ենթակառուցվածքների նղլայնման, բարեկարգման և լաիականման աշխատանքներ:	Գիշերային լուսավորության ցանցի տեսակարար կշիռը ներբնակավայրային ճանապարհային ցանցի մեջ (%)	95	100
	Գիշերային լուսավորվածությունից բնակիչների բավարարվածությունը (սոց. հարցումներ)	բավականին լավ	լավ
	Ջրամատակարարման ծառայությունից բնակիչների բավարարվածության աստիճանի բարձրացում (սոց. հարցումներ)	բավականին լավ	լավ
ԼՈՐՐԿ 5. Հողօգտագործում			
020 թվականի ընթացքում լորտում ծրագրեր և իջոցառումներ չեն ախատեսվում, այդ պատճառով լորտային նպատակ չի ախմանվել:	-	-	-
ԼՈՐՐԿ 6. Տրանսպորտի բնագավառ			
Ինենալ բարեկարգ համայնքային նթակայության ճանապարհներ:	Ընթացիկ նորոգված ներհամայնքային ճանապարհների երկարությունը, կմ	5.5	8
	Բարեկարգ անցանելի ներբնակավայրային ճանապարհների տեսակարար կշիռը ամբողջի մեջ (%)	85	95
	Բնակիչների բավարարվածությունը ճանապարհների վիճակից (սոց.	ավելի շատ լավ,	բավականին լավ

	հարցումներ)	քան վատ	
Դորդր 7. Առնդդոր և ծառայություններ			
020 թվականի ընթացքում լորտում ծրագրեր և իջոցառումներ չեն ախատեսվում, այդ պատճառով լորտային նպատակ չի ահմանվել:	-	-	-
Դորդր 8. Կրթություն			
Կրթության համայնքում թիվների որակը և ատելիությունը:	Նախադրոցական և արտադրոցական հաստատություններում ընդգրկվածությունից և կրթության որակից ծնողների բավարարվածությունը (սոց. հարցումներ)		
Դորդր 9. Մշակույթ և երիտասարդության հետ րարվող աշխարհը			
ազմակերպել համայնքի շակութային կյանքը, խթանել շակութային միջոցառումներին րիտասարդների ակտիվ ասնակցությունը:	Մշակութային ծառայությունների որակից և երիտասարդության հետ տարվող աշխատանքների մակարդակից բնակչության բավարարվածության աստիճանը (սոց. հարցումներ)	միջին՝ ոչ լավ, ոչ վատ,	ավելի շատ լավ, քան վատ,
Դորդր 10. Առողջապահություն			
020 թվականի ընթացքում լորտում ծրագրեր և իջոցառումներ չեն ախատեսվում, այդ պատճառով լորտային նպատակ չի ահմանվել:	-	-	-
Դորդր 11. Ֆիզիկական կուլտուրա և սպորտ			
020 թվականի ընթացքում լորտում ծրագրեր և իջոցառումներ չեն ախատեսվում, այդ պատճառով լորտային նպատակ չի ահմանվել:	-	-	-
Դորդր 12. Սոցիալական պաշտպանություն			
Կրթության սոցիալական նապահով ընտանիքներին րամադրվող սոցիալական ջակցության ասցեականությունը և որակը:	Սոցիալական ծրագրի առկայությունը համայնքում (այո/ոչ) Սոցիալական ծրագրի շահառուների	այո	այո
		միջին՝ ոչ լավ, ոչ վատ	ավելի շատ լավ, քան

	բավարարվածությունը իրականացվող ծրագրից		վատ
Խորք 13. Գյուղատնտեսություն			
ապաստել համայնքում գյուղատնտեսության արգացմանը:	Գյուղատնտեսության ոլորտի զարգացման ծրագրի առկայությունը (այո/ոչ)	ոչ	ոչ
	Գյուղ. տեխնիկայով և գործիքներով համայնքի ապահովվածությունը	վատ	բավականին վատ
Խորք 14. Անասնաբուծություն և բուսասանիտարիա			
020 թվականի ընթացքում լորտում ծրագրեր և իջրցառումներ չեն ախտատեսվում, այդ պատճառով լորտային նպատակ չի ահմանվել:	-	-	-
Խորք 15. Շրջակա միջավայրի պահպանություն			
Լպհովել համայնքի նակավայրերում բնակչությանը աղբահանության և անհիտարական մաքրման րակյալ և մատչելի առայությունների մատուցումը և րջակա միջավայրի մաքրությունը:	Համայնքի բնակիչների և ձեռնարկատերերի բավարարվածությունը աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքներից (սոց. հարցումներ)	բավականին լավ	լավ
	Աղբահանության կազմակերպման նպատակով բնակչության հետ կնքված պայմանագրերը, (%)	-	-
	Աղբահանության կազմակերպման նպատակով իրավաբանական անձանց հետ կնքված պայմանագրերը, (%)	8	8
	Աղբահանության և բնապահպանության ոլորտին վերաբերվող առկա ծրագրերի թիվը	1	1
Խորք 16. Հրդեհային			
020 թվականի ընթացքում լորտում ծրագրեր և իջրցառումներ չեն ախտատեսվում, այդ պատճառով լորտային նպատակ չի ահմանվել:	-	-	-
Խորք 17. Տեղական ինքնակառավարմանը			
նակչության մասնակցություն			
020 թվականի ընթացքում			

լորտում ծրագրեր և իջոցառումներ չեն ախտատեսվում, այդ պատճառով լորտային նպատակ չի ահմանվել:	-	-	-
---	---	---	---

2. Համայնքի 2020 թ. ծրագրերի ցանկը և տրամաբանական հենքերը (ըստ ոլորտների)

Ստորև ներկայացված են ՏԱՊ-ի այն ծրագրերը, որոնք ապահովված են համապատասխան ֆինանսական միջոցներով:

Աղյուսակ 3. ՏԱՊ-ի ծրագրեր, որոնք ապահովված են համապատասխան ֆինանսական միջոցներով

Հ/Հ	Ծրագրի անվանումը	Ծրագրի արժեքը (հազ. դրամ)	Բեականվայր(եր)ը
Ոլորտ 1. Ընդհանուր			
1.	Համայնքապետարանի աշխատակազմի պահպանում, համայնքային որակյալ ծառայությունների մատուցում և աշխատակազմի ինստիտուցիոնալ կարողությունների զարգացում	0.0	Գ. Ամբերդ
Ընդամենը		0.0	
Ոլորտ 4. Քաղաքաշինություն և կոմունալ տնտեսություն			
1.	Ամբերդ գյուղի արտաքին լուսավորության համակարգի ցանցի կառուցում	0.0	Գ. Ամբերդ
2.	Համայնքի արտաքին լուսավորության համակարգի ցանցի նորոգում և պահպանում	-	-
3.	Ամբերդ գյուղի խմելու ջրի ներքին ցանցի կառուցում	-	-
4.	Համայնքի խմելու ջրի մատակարարման համակարգերի ընթացիկ նորոգում և պահպանում	-	-
5.	Արևային ֆոտովոլտայիկ կայանի կառուցում	-	-
Ընդամենը		0.0	
Ոլորտ 6. Տրանսպորտ			
1.	Համայնքի բնակավայրերի ճանապարհների նորոգում և բարելավում	1940.0	Ամբերդ
Ընդամենը		1940.0	
Ոլորտ 8. Կրթություն			
1.	Համայնքում նախադպրոցական կրթության ծառայության մատուցում	0	Ամբերդ
2.	Համայնքում արտադպրոցական դաստիարակության ծառայության մատուցում	0	Ամբերդ
3.	Ամբերդ գյուղում մանկապարտեզի բացում	0	Գ. Ամբերդ
Ընդամենը		0	

Ոլորտ 9. Մշակույթ և երիտասարդության հետ տարվող աշխատանքներ			
1.	Համայնքի մշակութային կյանքի կազմակերպում	0.0	Ամբերդ
Ընդամենը		0.0	
Ոլորտ 12. Սոցիալական պաշտպանություն			
1.	Աջակցություն համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին	2000.0	Ամբերդ
Ընդամենը		2000.0	
Ոլորտ 13. Գյուղատնտեսություն			
1.	Գյուղատնտեսական տեխնիկայի ձեռքբերում և համայնքում գյուղատնտեսության զարգացման խթանում	0	Ամբերդ
Ընդամենը		0	
Ոլորտ 15. Շրջակա միջավայրի պահպանություն			
1.	Համայնքի բնակավայրերում աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքների կազմակերպում	980.0	Ամբերդ
2.	Աղբահանության և սանիտարական մաքրման կազմակերպման տեխնիկական միջոցների ձեռքբերում	0	Ամբերդ
Ընդամենը		980.0	
Ընդհանուրը		4920.0	

Ստորև ներկայացված են ՏԱՊ-ի այն ծրագրերը, որոնք ապահովված չեն համապատասխան ֆինանսական միջոցներով:

Աղյուսակ 4. ՏԱՊ-ի ծրագրերը, որոնք ապահովված չեն համապատասխան ֆինանսական միջոցներով

Հ/Հ	Ծրագրի անվանումը	Ծրագրի արժեքը (հազ. դրամ)	Բնակավայր(եր)ը
Ոլորտ 8. Կրթություն			
1.	2020 թվականի ընթացքում ծրագրերի և միջոցառումների համար:	0.0	գ. Ամբերդ
Ընդամենը		0.0	
Ոլորտ 9. Մշակույթի և երիտասարդության հետ տարվող աշխատանք			
1.	Մշակույթի կենտրոնի շենքի հիմնական նորոգում	970.0	գ. Ամբերդ
2.	Բնական գազի ձեռք բերում մշակույթի տան շենքում	950.0	գ. Ամբերդ
3.	Սպորտ հրապարակի նորոգում	900.0	գ. Ամբերդ
Ընդամենը		2820.0	
Ոլորտ 12 Շենք շինությունների կառուցում			
1.	Շենք շինությունների կառուցում	0.0	գ. Ամբերդ
Ընդամենը		0.0	
Ոլորտ 13 Հատուկ նյութերի ձեռք բերում			
1.	Հատուկ նյութերի ձեռք բերում	400.0	գ. Ամբերդ

Ընդամենը		400.0	
Ոլորտ 16. Հրոսաշրջություն			
1.	2020 թվականի ընթացքում ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում, այդ պատճառով ոլորտային նպատակ չի սահմանվել:	0	գ. Ամբերդ
Ընդամենը		0.0	
Ընդհանուրը		3220.0	

Ստորև ներկայացված են ՏԱՊ-ով նախատեսված ծրագրերի տրամաբանական հենքերը՝ ըստ համայնքի ղեկավարի լիազորությունների-ոլորտների:

Աղյուսակ 5. ՏԱՊ-ով նախատեսված ծրագրերի տրամաբանական հենքերը՝ ըստ համայնքի ղեկավարի լիազորությունների ոլորտների

Ամփոփ նկարագիր	Արդյունքային ցուցանիշներ	Տեղեկատվության աղբյուրներ	Պատասխանատու	Ժամկետ	Ռիսկեր
Ոլորտ 1. Ընդհանուր					
Ոլորտային նպատակ. Բարելավել ՏԻՄ-երի, համայնքապետարանի աշխատակազմի և ՀՈԱԿ-ների կողմից համայնքի բնակչությանը մատուցվող հանրային ծառայությունների որակը:			Ոլորտի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշ. 1. Համայնքի բնակիչների բավարարվածությունը ՏԻՄ-երի աշխատակազմի և ՀՈԱԿ-ների կողմից մատուցված ծառայությունների որակից (սոց. հարցումներ) - բավականին լավ 2. Համայնքի բյուջեի սեփական եկամուտների տեսակարար կշիռը բյուջեի ընդհանուր մուտքերի կազմում. 29.3 %		
Ծրագիր 1. Համայնքապետարանի աշխատակազմի պահպանում, համայնքային որակյալ ծառայությունների մատուցում և աշխատակազմի ինստիտուցիոնալ կարողությունների զարգացում					
Բնակավայրերը՝ Ամբերդ, Ամբերդ					
Ծրագրի նպատակ. Ապահովել աշխատակազմի բնականոն գործունեությունը, բարելավել բնակչությանը մատուցվող հանրային ծառայությունների որակը և զարգացնել համայնքապետարանի ինստիտուցիոնալ կարողությունները	Ծրագրի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշ. 1. Ապահովվել է աշխատակազմի բնականոն աշխատանքը և բնակչությանը մատուցված հանրային ծառայությունների որակը – բավականին լավ 2. Աշխատակիցների գիտելիքների և հմտությունների աճը - 10 %-ով	Ծրագրի գնահատման համակարգ. ՄԳ Կիսամյակային և տարեկան հաշվետվություններ	Համայնքի ղեկավար, աշխատակազմի քարտուղար	2020թ. հունվար – 2020թ. դեկտեմբեր	Համապատասխան մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսների անբավարարություն
Միջանկյալ արդյունք 1. Ապահովվել է	Ելքային ցուցանիշներ (քանակ, որակ, ժամկետ).	Տեղեկատվության աղբյուրներ. Աշխատակազմ.	Համայնքի ղեկավար, աշխատակազմի	2020թ. հունվար – 2020թ.	Համապատասխան ռեսուրսներ առկա են եղել

աշխատակազմի բնականոն գործունեությունը և բարձրացել են աշխատակիցների տեխնիկական և մասնագիտական կարողությունները:	1. ՏԻՄ-երի, համայնքապետարանի աշխատակազմի գործունեության վերաբերյալ բնակիչների իրազեկվածության աստիճանը (սոց. հարցումներով) - լավ 2. ՏԻՄ-երի կողմից բնակչությանը մատուցված հանրային ծառայությունների թիվը - 4 3. ՀԿՏՀ-ում օգտագործվող ծրագրերի թիվը - 2 4. Մասնագիտական վերապատրաստում անցած համայնքային ծառայողների թիվը - 0 5. Տարվա ընթացքում աշխատակազմի աշխատանքային օրերի թիվը՝ 233 6. Ծրագրի իրականացման ժամկետը -1 տարի	ՄԳ կիսամյակային և տարեկան հաշվետվությունն եր. ՀԿ-ներ, բնակիչներ	Ջարտուղար.	ղեկտեմբեր	
Միջոցառումներ (գործողություններ) 1. Աշխատակազմի պահպանություն 2. Հողի հարկի և գույքահարկի ավտոմատացված համակարգերի սպասարկում, բազաների ճշգրտում 3. Համայնքի անշարժ գույքի կառավարում 4. Համայնքապետարանի, շենքերի և գույքերի ընթացիկ նորոգում 5. ՏԻՄ-երի, աշխատակազմի աշխատողների մասնագիտական վերապատրաստման կազմակերպում 6. Համայնքային ջաղաքականությունների, ծրագրերի մշակում և կառավարում 7. Աշխատակազմի աշխատակիցներին անհրաժեշտ համապատասխան տեխնիկական և ծրագրային միջոցներով ապահովում			Մուտքային ցուցանիշներ (ներդրված ոետւրսներ) 1. Համայնքի բյուջեով նախատեսված աշխատակազմի պահպանման ծախսեր՝ 29556.2 հազ. դրամ 2. Համայնքապետարանի աշխատակազմի աշխատողներ՝ 11.5 3. Համայնքի հողի հարկի և գույքահարկի գանձման ավտոմատացված համակարգեր՝ 1 4. Համայնքապետարանի գույք 5. Համայնքի կառավարման տեղեկատվական համակարգ (ՀԿՏՀ) 6. Աշխատակազմի կառուցվածք և կանոնադրություն – առկա է Ֆինանսավորման աղբյուրը՝ համայնքի բյուջեի միջոցներ		
Միջանկյալ արդյունք 2. Բարձրացել է համայնքի բյուջեի սեփական եկամուտների հավաքագրման	Ելքային ցուցանիշներ (քանակ, որակ, ժամկետ). 1. Համայնքի բյուջեի սեփական եկամուտների հավաքագրման	Տեղեկագրվությա ն աղբյուրներ. ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվությունն ը	Աշխատակազմի Ջարտուղար.	2020թ. հունվար – 2020թ. դեկտեմբեր	Համապատասխան մարդկային, նյութական և ֆինանսական ոետւրսները առկա են եղել

մակարդակը:	տարեկան աճ - 30% 2. Հարկային պարտավորությունները չկատարող քաղաքացիների նկատմամբ հարուցված վարչական վարույթի գործերի թիվը - 3 3. Հողի հարկի բազայում առկա անճշտությունների նվազեցում - 85% 4. Գույքահարկի բազայում առկա անճշտությունների նվազեցում - 75% 5. Համայնքի բյուջեի սեփական եկամուտների գծով առկա ապառքների նվազեցում - 82 %				
Միջոցառումներ (գործողություններ) 1. Գույքահարկի, հողի հարկի, տեղական տուրքերի և վճարների գանձման աշխատանքներով զբաղվող աշխատակիցների ուսուցում և վերապատրաստում 2. Հարկերի և տուրքերի պարտքեր ունեցող քաղաքացիների ծանուցում, նրանց հետ անհատական աշխատանքների ծավալում 3. Վարչարարության լծակների ուժեղացում՝ հարկային պարտականությունները չկատարողների նկատմամբ դատարան կամ ԴԱՀԿ հայցադիմումների ներկայացում			Մուտքային ցուցանիշներ (ներդրված ռեսուրսներ) 1. Հարկերի, տուրքերի և տեղական վճարների գանձման աշխատանքներով զբաղվող մասնագետներ՝ 1 2. Համայնքապետարանում հողի հարկի և գույքահարկի բազաներ՝ 1 4. Համայնքի բյուջեի սեփական եկամուտների գծով առկա ապառքներ - 18131.0 հազ.դրամ		
Միջանկյալ արդյունք 3. Բարելավվել է ՏԻՄ-երի կողմից բնակչությանը մատուցված հանրային ծառայությունների որակը և մատչելիությունը, աշխատակազմի կողմից ապահովվել է համայնքի ղեկավարի և համայնքի ավագանու լիազորությունների արդյունավետ իրականացումը	Ելքային ցուցանիշներ (քանակ, որակ, ժամկետ). 1. ՏԻՄ-երի, համայնքապետարանի աշխատակազմի աշխատանքից, մատուցված ծառայությունների որակից բնակիչների բավարարվածության աստիճանի բարձրացում (հարցումների հիման վրա), 10%-ով 4. Քաղաքացիների դիմում-գանգատներին պատասխանելու միջին ժամկետը՝ 5 օր 5. Համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի	Տեղեկատվության աղբյուրներ. Աշխատակազմի քարտուղար, ՀՈԱԿ-ի տնօրեն, ՄԳ Կիսամյակային և տարեկան հաշվետվություններ	Համայնքի ղեկավարի տեղակալ, աշխատակազմի քարտուղար, ՀՈԱԿ-ի տնօրեն,	2020թ. հունվար - 2020թ. դեկտեմբեր	Համապատասխան մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսները առկա են եղել

մոտ քաղաքացիների ընդունելությունների թիվը՝ 119					
Միջոցառումներ (գործողություններ) 1. Աշխատակազմի աշխատողների արդյունավետ և թափանցիկ աշխատանքի ապահովում 2. Համայնքի ֆինանսական միջոցների արդյունավետ և թափանցիկ կառավարում 3. Համայնքի գույքի և հիմնական միջոցների կառավարման բարելավում 4. Համայնքապետարանի աշխատակազմում առկա տեղեկատվական համակարգերի շահագործում և պահպանում 5. Աշխատակազմի աշխատակիցների և վարչական ղեկավարի նստավայրում աշխատանքային պայմանների բարելավում			Մուտքային ցուցանիշներ (ներդրված ռեսուրսներ) 1. Համայնքապետարանում ՀՈԱԿ-ներում առկա համակարգչային տարբեր՝ 1 2. Աշխատակազմի տեղեկատվական և հեռահաղորդակցության համակարգեր՝ 1 3. Աշխատակազմում ֆինանսների և գույքի կառավարման, ինչպես նաև ոլորտային հարցերով զբաղվող մասնագետներ՝ 1 4. Աշխատակազմում տեղեկատվական համակարգերի կառավարման հարցերով զբաղվող մասնագետ՝ 1 5. Համայնքի պաշտոնական համացանցային կայք - առկա է 6. ՏԻ-անը բնակիչների մասնակցության կարգեր -1		
Ոլորտ 4. Քաղաքաշինություն և կոմունալ տնտեսություն					
Ոլորտային նպատակ. Իրականացնել բնակավայրային կոմունալ ենթակառուցվածքների ընդլայնման, բարեկարգման և պահպանման աշխատանքներ			Ոլորտի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշ. 1. Գիշերային լուսավորության ցանցի տեսակարար կշիռը ներբնակավայրային ճանապարհային ցանցի մեջ - 90% 2. Գիշերային լուսավորվածությունից բնակիչների բավարարվածությունը (սոց. հարցումներ) - լավ 3. Զրամատակարարման ծառայությունից բնակիչների բավարարվածությունը (սոց. հարցումներ) - լավ 4. Համայնքապետարանի և համայնքային կազմակերպությունների կողմից էլ.էներգիայի տարեկան ծախսումների նվազեցում - 2%-ով		
Ծրագիր 1. Ամբերդ գյուղի արտաքին լուսավորության համակարգի ցանցի կառուցում					
Ծրագրի նպատակ. Բարձրացնել Ամբերդ գյուղի փողոցների անվտանգ երթևեկության մակարդակը և դրանք դարձնել հարմարավետ տրանսպորտային միջոցների և հետիոտների համար	Ծրագրի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշ. Բնակիչների բավարարվածությունը գյուղում գիշերային լուսավորվածությունից (հարցումների հիման վրա) - լավ	Ծրագրի գնահատման համակարգ. ՄԳ Կիսամյակային և տարեկան հաշվետվություններ	Համայնքի ղեկավար.	2020թ. հունվար – 2020թ. հունիս	Ռիսկեր առկա չեն
Միջանկյալ արդյունք 1. Բարձրացել է	Ելքային ցուցանիշներ (քանակ, որակ, ժամկետ)	Տեղեկատվական աղբյուրներ. Աշխատակազմ,	Ամբերդ գյուղի ղեկավար	2020թ. հունվար – 2020թ. հունիս	Ռիսկեր առկա չեն

Ամբերդ գյուղի փողոցների լուսավորվածության և աստիճանը, բնակիչների և տրանսպորտի համար երթևեկը դարձել է անվտանգ	1. Փողոցներում տեղադրված սյուների և լուսատուների թիվը՝ 235 2. Կառուցված լուսավորության ցանցի երկարությունը՝ 9100 մ 3. Բնակիչների կարծիքը մատուցված ծառայությունից - լավ 4. Ծրագրի իրականացման ժամկետը - 2 ամիս	ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ			
Միջոցառումներ (գործողություններ) 1. Շինարարական աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի պատվիրում 2. Շինարարական աշխատանքների կատարման մրցույթի կազմակերպում և մրցույթում հաղթող ճանաչված կազմակերպության հետ պայմանագրի կնքում 3. Աշխատանքների իրականացում և վերահսկում 4. Աշխատանքների կատարման հանձնման-ընդունման ավարտական ակտի կազմում, քննարկում և հաստատում			Մուտքային ցուցանիշներ (ներդրված ռեսուրսներ) 1. Համայնքի բյուջեով նախատեսված ծախսեր՝ 0 հազ. դրամ		
Ծրագիր 2. Համայնքի արտաքին լուսավորության համակարգի ցանցի նորոգում և պահպանում Բնակավայրերը՝ Ամբերդ,					
Ծրագրի նպատակ Բարելավել համայնքի փողոցային լուսավորության վիճակը, ապահովել լուսավորության ցանցի անխափան աշխատանքը	Ծրագրի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշ Բնակիչների բավարարվածությունը համայնքում գիշերային լուսավորվածությունից (հարցումների հիման վրա) - բավականին լավ	Ծրագրի գնահատման համակարգ ՄԳ կիսամյակային և տարեկան հաշվետվություններ	Համայնքի ղեկավար,	2020թ. հունվար - 2020թ. դեկտեմբեր	Ֆինանսական ռեսուրսների սղություն
Միջանկյալ արդյունք 1. Ամբերդ գյուղի փողոցները, հանրային տարածքները և հրապարակները դարձել են լուսավոր և զեղեցիկ, հետիոտնի և տրանսպորտային երթևեկի համար անվտանգ	Ելքային ցուցանիշներ (քանակ, որակ, ժամկետ). 1. Նորոգված հենասյուների քանակը՝ 0 2. Փոխված և ներկված հենասյուների և լուսամփոփների քանակը՝ 0 3. Փոխված լուսատուների քանակը՝ 0 4. Նորոգված լուսավորության ցանցի երկարությունը՝ 0 մ	Տեղեկատվական աղբյուրներ. ՄԳ կիսամյակային և տարեկան հաշվետվություններ, ՀՈԱԿ-ի տնօրեն,	ՀՈԱԿ-ի տնօրեն,	2020թ. հունվար - 2020թ. դեկտեմբեր	Համապատասխան մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսները առկա են եղել

	5. Գիշերային լուսավորության ժամերի թիվը օրվա կտրվածքով - 6 ժամ				
	6. Գիշերային լուսավորված փողոցների տեսակարար կշիռն ընդհանուրի մեջ, 90 %				
Միջոցառումներ (գործողություններ) 1. Համայնքի բնակավայրերի լուսավորության ցանցի նորոգման աշխատանքների նախահաշվի կազմում 2. Կատարվող աշխատանքների որակի նկատմամբ վերահսկողության սահմանում 3. Կատարված աշխատանքների մասին կազմված ակտի քննարկում, հաստատում և ընդունում			Մուտքային ցուցանիշներ (ներդրված ռեսուրսներ) 1. Համայնքի բյուջեով նախատեսված ծախսեր՝ 0.0 հազ. դրամ Ֆինանսավորման աղբյուրը՝ համայնքի բյուջեի միջոցներ		
Ոլորտ 3. Տրանսպորտ					
Ոլորտային նպատակ. Ունենալ բարեկարգ համայնքային ենթակայության ճանապարհներ:			Ոլորտի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշ. 1. Ընթացիկ նորոգված երեւմյանքային ճանապարհների երկարությունը- 5.5 կմ 2. Բարեկարգ անցանելի ներքնակավայրային ճանապարհների տեսակարար կշիռը ամբողջի մեջ - 85% 3. Բնակիչների բավարարվածությունը ճանապարհների վիճակից (սոց. հարցումներ) - միջին՝ ոչ լավ, ոչ վատ		
Ծրագիր 4. Համայնքի բնակավայրերի ճանապարհների նորոգում և բարեկարգում					
Բնակավայրերը՝ Ամբերդ.					
Ծրագրի նպատակ. Համայնքային ենթակայության ճանապարհները դարձնել անցանելի ու հարմարավետ հետիոտների և տրանսպորտային միջոցների երթևեկության համար	Ծրագրի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշ. Համայնքային ենթակայության ճանապարհները դարձնել են անցանելի ու հարմարավետ հետիոտների և տրանսպորտային միջոցների երթևեկության համար - 80 %	Ծրագրի գնահատման համակարգ. ՄԳ կիսամյակային և տարեկան հաշվետվություններ	Համայնքի ղեկավարի տեղակալ, ՀՈԱԿ-ի տնօրեն	2020թ. հունվար - 2020թ. դեկտեմբեր	Ֆինանսական միջոցների անբավարարություն
Միջանկյալ արդյունք 1. Նորոգվել են Ամբերդ գյուղերի ճանապարհները, անել է բնակչության բավարարվածության և աստիճանը	Ելքային ցուցանիշներ (քանակ, որակ, ժամկետ). 1. Հարթեցված, խճապատված և բարեկարգված ճանապարհների երկարությունը - 5.5 կմ 3. Բնակիչների	Տեղեկագրվակա և աղբյուրներ. Ծրագրի գնահատման համակարգ, ՄԳ կիսամյակային տարեկան հաշվետվություններ.	Համայնքի ղեկավարի տեղակալ, ՀՈԱԿ-ի տնօրեն	2020թ. հունվար - 2020թ. դեկտեմբեր	Ֆինանսական միջոցները առկա են եղել

ճանապարհների շահագործման որակից	կարծիքը ասֆալտապատ և բարեկարգ ճանապարհների վերաբերյալ - բավարար 4, Ծրագրի իրականացման ժամկետը - 1 տարի	աշխատակազմ, հաշվետվություններ, բնակիչներ, ՀԿ-ներ			
Միջոցառումներ (գործողություններ) 1. Նորոգման և բարեկարգման կարիք ունեցող ճանապարհների նախահաշվային փաստաթղթերի կազմում 2. Կատարվող աշխատանքների որակի նկատմամբ վերահսկողության սահմանում 3. Կատարված աշխատանքների արդյունքի վերաբերյալ արձանագրության (ակտի) կազմում, քննարկում և հաստատում			Մուտքային ցուցանիշներ (ներդրված ռեսուրսներ) 1. Համայնքի բյուջեով նախատեսված ծախսեր՝ 0.0 հազ. դրամ Ֆինանսավորման աղբյուրը՝ համայնքի բյուջեի միջոցներ		
Ոլորտ 8. Կրթություն					
Ոլորտային նպատակ. Բարձրացնել համայնքում կրթության որակը և մատչելիությունը:			Ոլորտի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշ. -		
Ոլորտ 9. Մշակույթ և երիտասարդության հետ տարվող աշխատանք					
Ոլորտային նպատակ. Կազմակերպել համայնքի մշակութային կյանքը, խթանել մշակութային միջոցառումներին երիտասարդների ակտիվ մասնակցությունը:			Ոլորտի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշ. Մշակութային ծառայությունների որակից և երիտասարդության հետ տարվող աշխատանքների մակարդակից բնակչության բավարարվածությունը (սոց. հարցումներ) - լավ		
Ծրագիր 1. Համայնքի մշակութային կյանքի կազմակերպում Բնակավայրերը՝ Ամբերդ,					
Ծրագրի նպատակ. Բարձրացնել մշակութային ծառայությունների որակից և երիտասարդության և հետ տարվող աշխատանքների մակարդակից բնակչության բավարարվածության աստիճանը	Ծրագրի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշ. Համայնքի մշակութային նախաձեռնություններին և բնակիչների մասնակցությունը - բավականին լավ	Ծրագրի գնահատման համակարգ ՄԳ կիսամյակային և տարեկան հաշվետվություններ	Համայնքի ղեկավար, ՀՈԱԿ-ի տնօրեն	2020թ. հունվար-2020թ. դեկտեմբեր	Համապատասխան մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսների անբավարարություն
